

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°10.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի  
նիստի

25-ը փետրվարի 2015թ.

Նախագահ՝ Մ. Ա. Չաքարյան

Քարտուղար՝ Հ. Մ. Գասպարյան

Նիստին մասնակցում էր մասնաճյուղի տնօրեն Մ. Ա. Առաքելյանը և

ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Յ. Դավթյանը:

### ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատում:  
/գեկ. Մ. Ա. Չաքարյան/
  2. Ֆակուլտետի զարգացման տարեկան ռազմավարական ծրագրի ընդունում:  
/գեկ. Մ. Ա. Չաքարյան/
  3. Ֆինանսական միջոցների ներհոսքի /ուսման վճարներ/ վիճակի քննարկում:  
/գեկ. Մ. Ա. Չաքարյան/
1. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի գիտխորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Չաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Չաքարյանը

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Մ. Ա. Չաքարյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի գիտխորհրդի նոր կազմը.

1. Չաքարյան Մանվել Աշոտի-դեկանի ժ/պ, նախագահ
2. Գասպարյան Հռիփսիմե Սերյոժայի - ֆակ. քարտուղար, քարտուղար
3. Գուլակյան Գեղամ Վոլոդյայի-արհմիության նախագահ, անդամ
4. Յուրուլյան Արտակ Վոլոդյայի – Ընդ. մարթ. և բնագիտ.ա/վ ժ/պ, անդամ

5. Քամայան Ռաֆայել Ռուբենի-Ծրագրավ. և ինֆորմացիոն տեխնոլ. ա/վ ժ/պ, անդամ
  6. Աթոյան Մհեր Սերգեյի- Ընդ. մաթ. և բնագիտ.ամբիոնի դոցենտ, անդամ
  7. Ասիլբեկյան Պավել Նորիկի -Տուրիզմի և մշակութաբ. ամբիոնի ասիստենտ, անդամ
  8. Օթարյան Քնար Վլադիմիրի-Ծրագր.. և ինֆ. տեխնոլ. ամբիոնի դասախոս, անդամ
  9. Սաֆարյան Անդրեյ Մեսրոպի-ՈԻԽ նախագահ, անդամ
  10. Ղևոնդյան Սոնա Գառնիկի-ՈԻԳԸ նախագահ, անդամ
  11. Ներսիսյան Վարուժան Նարիմանի-ՀՀ ԿՊԿ Տավուշի մարզային ստորաբաժան. ղեկավար
  12. Ղազարյան Հարություն Ավետիքի-Գետահովիտի հիմնական դպրոցի տնօրեն
  13. Թիրաբյան Մարսպետ Պարզևի-Իջևանի թ.1հիմնական դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ
  14. Հովսեփյան Անահիտ Մհերի- ԻԿՄ II կուրսի ուսանողուհի
  12. Խաչատրյան Նազելի Մանվելի-ԻԿՄ II կուրսի ուսանողուհի
- Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանը, որը կազմվել է ֆակուլտետի զարգացման ռազմավարական պլանի դրույթների և ուսումնական գործընթացի ժամանակացույցի հիման վրա:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ՕՐԱԿԱՐԳ	ՁԵԿՈՒՅՈՂ	ԾԱՆՈ ԹՈՒ ԹՅՈՒՆ
<b>25.02.2015թ.</b>	<p>4. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատում</p> <p>5. Ֆակուլտետի զարգացման տարեկան ռազմավարական ծրագրի ընդունում:</p> <p>6. Ֆինանսական միջոցների ներհոսքի /ուսման վճարներ/ վիճակի քննարկում:</p> <p>7. Ընթացիկ հարցեր:</p>	Մ. Ա. Զաքարյան	
<b>09.03.2015թ.</b>	<p>2. 2014-15թթ. ուս. տարվա II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:</p> <p>3. Որակի ներքին ապահովման համակարգի պետական հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան պահանջի քննարկում: Մանկավարժական պրակտիկաների ամփոփում:</p> <p>4. Կուրսային աշխատանքների կատարման ընթացքի քննարկում:</p>	<p>Մ. Ա. Զաքարյան</p> <p>Մ. Ս. Աթոյան</p> <p>Ա.Վ. Ցուցույան</p> <p>Ռ. Ռ. Քամայան</p>	

	5. Գնահատման նոր համակարգի քննարկում: Կրթական արդյունքերի չափորոշիչներով բակալավրի հիմնական ծրագրերի հիմք՝ որակավորումների ազգային շրջանակը:	Մ. Ա. Զաքարյան	
07.04.2015թ.	<p>1. Ամբիոնի վարիչների հաշվետվություն:</p> <p>2. Ուսանողների բավարարվածության մակարդակը ուսումնառությունից և օժանդակ ծառայությունից:</p> <p>3. 2014-15թթ. ուս. տարվա II կիսամյակի I ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում: II ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:</p> <p>4. Որակի ներքին ապահովման համակարգի պետական հավատարմագրման և մասնագիտական որակավորման բարձրացման պետական չափանիշներին համապատասխան պահանջի քննարկում:</p> <p>5. Մասնագիտական որակավորման բարձրացման աշխատանքներ /գիտական նստաշրջանի կամ գիտաժողովի հրավիրում:</p>	<p>Ա. Վ. Յուզույան Ռ. Ռ. Քամայան</p> <p>Մ. Ա. Զաքարյան</p> <p>Մ. Ա. Զաքարյան</p> <p>Մ. Ա. Զաքարյան</p> <p>Մ. Ա. Զաքարյան</p>	
11.05.2015թ.	<p>1. Ուսումնական խորհրդատուի հաշվետվություն:</p> <p>2. Ընդունելության համապատասխանություն աշխատաշուկային:</p> <p>3. 2014-15թթ. ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում և գրաֆիկի հաստատում:</p> <p>4. Տեղեկատվական ռեսուրսների չափանիշների արդյունավետության և մատչելիության վիճակի քննարկում:</p>	<p>Ք. Վ. Օթարյան, Մ. Ա. Զաքարյան Մ. Ա. Զաքարյան</p> <p>Ռ. Ռ. Քամայան</p>	
01.06.2015թ.	<p>1. 2014-15թթ. ուս. տարվա կուրսային աշխատանքների պաշտպանության արդյունքների քննարկում:</p> <p>2. 2014-15թթ. ուս. տարվա II կիսամյակի II ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:</p> <p>3. 2014-15թթ. ուս. տարվա աշխատանքային ուսումնական պլանների քննարկում և հաստատում:</p> <p>4. Կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխություններ:</p>	<p>Ա. Վ. Յուզույան Ռ. Ռ. Քամայան</p> <p>Մ. Ա. Զաքարյան</p> <p>Մ. Ա. Զաքարյան</p>	
29.06.2015թ.	<p>1. 2014-15թթ. ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի ամփոփում:</p> <p>2. Ուսումնական տարվա ամփոփում</p>	Մ. Ա. Զաքարյան	

**ԱՐՏԱՅԱՅՏՎԵՑԻՆ-** «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Վ. Յուզույանը: Նա համակարծիք էր ներկայացված ցուցակին, պլանին և առաջարկեց հաստատել:

**ՈՐՈՇԵՑԻՆ- 1.** Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին հաստատելու 2014-15թթ. ուստարվա II կիսամյակի ֆակուլտետի գիտխորհրդի նոր կազմը և աշխատանքային պլանը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցող Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագիրը, առաքելությունը՝ որպես հյուսիս-արևելյան տարածաշրջանի միակ պետական բարձրագույն կրթօջախ հանդիսանում է կրթական և գիտամշակութային հաստատություն, որի հիմնական նպատակը գիտելիքի ստեղծումն ու բազմաբնույթ իրականացումն է պետական ռազմավարության շրջանակներում: Զեկուցողը ներկայացրեց նաև ծրագրի հիմնարար արժեքները, նպատակները:

Ռազմավարական ծրագրի մեջ կարևորվում է նաև ընթացիկ գերակայությունը. Ընդլայնել ֆակուլտետի ընդունելության պրոֆիլը, համապատասխանեցնելով տարածաշրջանի տնտեսական զարգացման և աշխատաշուկայի պահանջներին:

Ավարտելով խոսքը զեկուցողը ընդգծեց նաև, որ այս և մյուս առաջատար գործընթացների ապահովման համար առաջնահերթ տեղ է գրավում ֆինանսական կայունությունը և արդյունավետ կառավարումը:

**ԱՐՏԱՂԱՅՏՎԵՑԻՆ.-** Հ. Ս. Գասպարյանը, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք ընդգծեցին ծրագրի կարևորությունը և առաջարկեցին հաստատել:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Հաստատել ֆակուլտետի զարգացման տարեկան ռազմավարական ծրագիրը:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ֆինանսական ներհոսքի՝ ուսման վճարների մուծումների վիճակի մասին, որը ընդհանուր առմամբ չկա ուսման վճարների պարտք:

Ընդարձակ ելույթով հանդես եկավ մասնաճյուղի տնօրեն պր-ն Մ. Ա. Առաքելյանը: Նա ներկայացրեց նախկին ՊՈԱԿԻ և Հիմնադրամի տարբերությունները և Հիմնադրամի առավելությունները: Այդ ուղղությամբ կարևորեց բնական գիտությունների ֆակուլտետի „Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, և „Քարտեզագրություն և կադաստրային գործ,, մասնագիտությունների կարևորությունը և պահանջարկը ժամանակակից աշխատաշուկայում: Հիմնադրամը կարող է համագործակցել շահույթ բերել, օրենքի սահմաններում ինչ թույլատրելի է կարող է իրականացնել: Հատկապես չափազանց ուղղությամբ կա

պահանջարկ, անհրաժեշտ է օգտագործել դասախոսական կազմի և ուսանողների մասնագիտական պատրաստակամությունը նշված մասնագիտությունները գրավիչ դարձնելու ուղղությամբ: Դիմորդների գիտակցությանը հասցնել մասնագիտությունների պահանջարկի և առաջարկի անհրաժեշտությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**- Այնուհետև իր ելույթով հանդես եկավ «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչի ժ/պ Ռ. Ռ. Քամայանը: Նա ներկայացրեց „Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, մասնագիտության կրթական մակարդակի բարձրացման հետ կապված առաջարկներ, որպեսզի մեր շրջանավարտները աշխատաշուկայում լինեն մրցունակ:

Այնուհետև ելույթ ունեցավ ՀՀ ԿՊԿ Տավուշի մարզային ստորաբաժանման ղեկավար Վ. Ն. Ներսիսյանը: Նա մանրամասնեց պետական սեկտորի և մասնավոր սեկտորի չափագրումներ կատարելով մասնագետի պահանջարկի մասին:

«Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Վ. Ցուցույանը ներկայացրեց, որ ֆակուլտետի ամբողջ ուսումնական գործընթացը բխում է կրթության որակից:

Վերջում ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ներֆակուլտետային ուսումնական գործընթացի մասին.

1. 2014-15 ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքների ամփոփ տվյալները, ըստ որի 2013-14 ուստարվա նույն ժամանակամիջոցի համեմատական արդյունքում նկատելի է ուսման բարձր առաջադիմություն: Առկա է մեկ ուսանողի կրեդիտի պարտք. անցած ուստարում՝ 4:

2. Ներկայացվեց „Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների,, ամբիոնի թ.6 նիստի քաղվածքը, որտեղ ընդունվել է, GUI ծրագրավորում առարկայի թեմատիկ պլանը, որը կազմված էր VISUAL C++ ծրագրի MFC գրադարանի ուսուցումից, փոխարինել QT-ով:

**ՈՐՈՇԵՑԻՆ**- Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն հաստատելու „Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների,, ամբիոնի նիստի որոշումը:

**ՆԱԽԱԳԱՀ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

**Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**